# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«—» —— 2021թ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան ՍՊԸ-ն (այսուհետև՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն՝ Աշոկչանդրա Նարսիմբիաի Պատելի և Աբովյանի «Կարդիոմեդ ընտանեկան բժշկության կենտրոն» ՍՊԸ-Ն (այսուհետև՝ Կատարող), ի դեմս տնօրեն Սամվել Հայրումյանի, կազմեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

Բժշկական բարձրագույն մասնագիտությունների գծով ուսումնական գործընթացի կազմակերպումը «Կարդիոմեդ ընտանեկան բժշկության կենտրոն»-ի կողմից՝ ըստ Համալսարանի ներկայացրած ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի («Բուժական գործ» մասնագիտությամբ) :

## 2. Ընդհանուր դրույթներ

Կողմերի փոխշահավետ համագործակցությունը ենթադրում է.

1. Պատվիրատուի ուսումնական պլանով նախատեսված առարկաների գծով ուսումնական պարապմունքների (դասախոսություն, գործնական, աշխատանքներ) անցկացումն անհրաժեշտ սարքավորումներով, պլակատներով, գծապատկերներով կահավորված լսարաններում:

Ընտանեկան բժշկություն, պոլիկլինիկական թերապիա :

- Ուսումնական դասընթաց (տեսական ուսուցմամբ) :

Սահմանել գործնական դասընթացներ անցնող ուսանողների հետևյալ թվաքանակը «Բուժական գործ» մասնագիտության յուրաքանչյուրկուրսի համար 200-ական տեղ:

### 3.Կողմերի պարտավորությունները

### 3. 1 Պատվիրատուի պարտավորությունները

1. Ուսումնական տարվա համապատասխան կիսամյակի նախօրյակին (ուսումնական գործընթացը սկսելուց 2 շաբաթ առաջ) Կատարողին ներկայացնել.

- Գործընթացին վերաբերող ծրագրային պահանջներն ու մեթոդական հրահանգները:

2. Հսկողություն սահմանել ուսանողների հաճախումների, ողջ ուսումնական գործընթացի նկատմամբ:

3. Հետևել, որ ուսանողները

- Ենթարկվեն Կատարող կողմի կարգուկանոնին,
- Բարեխղճորեն վերաբերվեն տրամադրված տարածքին ու գույքին,
- Փոխհատուցել ուսանողների պատճառած նյութական վնասները:

4. Ուսումնական գործընթացում, որպես դասախոսներ և ամբիոնի վարիչներ, ընդգրկել Կատարող կողմի բարեխիղճ ու բանիմաց աշխատակիցներին, նրանց հետ կնքել աշխատանքային պայմանագրեր:

5.Կատարողի (Կարդիոմեդ ընտանեկան բժշկության կենտրոն) ուսումնական գործընթացում ընդգրկված աշխատակիցների վճարումն իրականացնել ժամավճարային կարգով:

6. Ուսումնական գործընթացի կազմակերպման արժեքը յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի համար սահմանել ուսումնական պլանով նախատեսված դասաժամերին համապատասխան __60.000_(վաթսուն հազար)_ ՀՀ դրամ՝ համաձայն կատարողական ակտի:

7. Ժամանակին կատարել Կատարողին տրվող վճարումները:

8. Ժամանակին վճարել Կատարողի աշխատակիցներից Համալսարանի ուսումնական գործընթացում ընդգրկված դասախոսների և ամբիոնի վարիչների աշխատավարձերը:

## 4.Կատարողի պարտավորությունները

1. Ուսանողներին ծանոթացնել Կատարող կողմի կարգուկանոնին, անվտանգության տեխնիկայի կանոններին:

2. Համալսարանին ներկայացնել հմուտ և փորձառու, գիտական կոչումներ և (կամ) աստիճաններ ունեցող բժիշկներին՝ Պատվիրատուի մոտ, որպես համապատասխան բժշկական առարկաների դասախոսներ և ամբիոնների վարիչներ, աշխատելու համար:

3. Անհրաժեշտ պայմաններ ստեղծել ուսումնական գործընթացի կազմակերպման համար

3.1 Ուսանողների մասնագիտական զարգացման և ուսումնական գործընթացը կազմակերպելու նպատակով հատկացնել կրթական ծրագրերով նախատեսված լսարաններ:

3.2. Պարապմունքների ընթացքում օգտագործել թեմայի յուրացման մեթոդական հրահանգները:

3.3. Ուսումնական պարապմունքերն անցկացնել Կարդիոմեդ ընտանեկան բժշկության կենտրոնի համապատասխան բաժանմունքների կոնսուլտացիոն և ախտորոշիչ սենյակներում՝ համալրված անհրաժեշտ բժշկական սարքավորումներով:

3.4. Հետևել, որ բժիշկ-մասնագետների զննման սենյակներում ուսանողների քանակը չգերազանցի թույլատրելի նորմաները:

3.5. Թույլատրել օգտվելու ներքոհիշյալ առարկային համապատասխան բժշկական բաժանմունքների ծառայություններից.

- Ընտանեկան բժշկություն, պոլիկլինիկական թերապիա:

3.6. Համալսարանի ուսանողներին թույլատրել, ուսումնական պարապունքներից դուրս ժամերին, անվճար կամ վճարովի հիմունքներով, աշխատել Կարդիոմեդ ընտանեկան բժշկության կենտրոնում:

3.7 Հսկել, թե ինչո՞վ են զբաղվում ուսանողները Կարդիոմեդ ընտանեկան բժշկության կենտրոնում, ի՞նչ կազմով, ո՞վ է հսկում նրանց գործունեությունը:

4. Ուսումնական գործընթացի հետ կապված բոլոր հարցերն ու փոփոխությունները համաձայնեցնել Համալսարանի հետ;

5. «Կարդիոմեդ ընտանեկան բժշկության կենտրոն» -ի կողմից ներկայացված դասավանդող դասախոսների անձնակազմը պատասխանատվություն է կրում Համալսարանի ուսանողների և նրանց հետ կատարվող աշխատանքների համար:

## 5.Եզրափակիչ դրույթներ

1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրելու և կնքելու օրվանից՝1 տարի ժամկետով:

2. Պայմանագիրը կնքված է 2 օրինակից, որոնցից մեկը գտնվում է Համալսարանում, մյուսը՝ «Կարդիոմեդ ընտանեկան բժշկության կենտրոն»-ում:

3. Լրացուցիչ պայմաններ առաջանալու դեպքում կնքվում են նոր պայմանագրեր

4. Պայմանագիրը կարող է լուծարվել կողմերի համաձայնությամբ

5. Պայմանագիրը կարող է դադարել նաև որպես հետևանք

- Կողմերից որևէ մեկին սնանկ ճանաչելու կամ անհաղթահարելի (ֆորսմաժորային) ուժի դեպքում
- Կողմերից որևէ մեկի լուծարվելու կամ վերակազմավորվելու դեպքում:

## 6. Կողմերի Իրավաբանական Հասցեները

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական

միջազգային համալսարան ՍՊԸ

Հասցե՝ ք. Երևան, Մեքաստիա 3/7

Բանկը՝ Հայէկոնոմ ԲԲԸ,

Վանաձորի մասնաճյուղ

Հ/Հ 163138146846

ՀՎՀՀ՝ 01243384

Տնօրեն Ա. Ն. Պատել

(ստորագրություն)

«Կարդիոմեդ ընտանեկան բժշկության կենտրոն»

Հասցե՝ ք. Աբովյան, Հանրապետության պողոտա, թիվ 11 շենք

Բանկը՝ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ ՓԲԸ

Հ/Հ 220113331171000

ՀՎՀՀ՝ 03536349

Տնօրեն Սամվել Հայրումյան

(ստորագրություն)

**AGREEMENT**

«—» —— 2021

"Mkhitar Gosh" Armenian-Russian International University LLC (hereinafter referred to as the **Customer**), represented by the Executive Director, Ashokchandra Narsimbhai Patel and Abovyan "Cardiomed Family Medicine Center'' LLC (hereinafter referred to as the **Executor**), represented by Director Samvel Hayrumyan, made this agreement as follows:

## 1. Subject of the contract

Organization of the educational process for higher medical specialties by the "Cardiomed Family Medicine Center" according to the curricula and subject programs presented by the University ("General Medicine" specialty).

## 2. General provisions

Mutually beneficial cooperation of the parties presupposes:

1. Conducting training classes (lectures and practical work) on the subjects envisaged by the client's curriculum in classrooms equipped with the necessary equipment, posters and diagrams.

Family medicine, polyclinic therapy

- Training course (with theoretical training).

Define the following number of students taking practical courses .Provide 200 places for each course in the field of "General Medicine" for the teaching of the above-mentioned subject.

## 3. Obligations of the parties
## 3. 1 Obligations of the Customer

1. Introduce the Performer on the eve of the corresponding semester of the academic year (2 weeks before the start of the educational process).

- Lists of students involved in the educational process by courses,
- Process requirements and methodological instructions for the process.

3. Follow up with the students

Obey the rules of the Contracting Party;

- Treat the provided area and property in good faith;
- Compensate for material damage caused by students.

4. Involve the conscientious and knowledgeable employees of the Executing Party in the educational process, as lecturers , as heads of chairs, sign employment contracts with them.

5. Pay the staff involved in the educational process of the executor (Cardiomed Family Medicine Center) on an hourly basis.

6. To set the cost of organizing the educational process for each semester in accordance with the lessons envisaged by the curriculum __60.000_ (sixty thousand) _ AMD, according to the executive act.

7. Make timely payments to the Executor.

8. To pay on time the salaries of the Executors, the salaries of the lecturers chairmen of the University, involved in the educational process of the University.

## 4. Obligations of the executor

1. Introduce the students to the rules of the Performing Party, the rules of safety techniques.

2. To present to the University the doctors with skilled and experienced, scientific titles (or) degrees to work for the Client as lecturers of relevant medical subjects as the heads of departments.

3. Create the necessary conditions for the organization of the educational process.

3.1 Provide classrooms for educational programs to organize the professional development of students.

3.2. Use the methodical instructions for mastering the topic during the lessons.

3.3. Conduct training relevant departments of Cardiomed Family Medicine Center

in consultation and diagnostic rooms quipped with the necessary medical equipment.

3.4. Follow that:in the examination rooms of specialists,the number of students should not exceed the permissible norms .

3.5. Allow access to the services of the relevant medical departments under the following subject:

• Family medicine, polyclinic therapy

3.6. Allow university students to work at the Cardiomed Family Medicine Center on a free or paid basis outside of school hours.

3.7 Supervise what students do at Cardiomed Family Medicine Center, staff, who oversees their activities.

4. Coordinate all issues and changes related to the educational process with the University;

5. The teaching staff provided by Cardiomed Family Medicine Center is responsible for the University students and their work.

## 5. Final provisions

1. This contract enters into force within 1 year from the date of signing.

2. The contract is signed in 2 copies, one of which is at the University, the other at the "Cardiomed Family Medicine Center".

3. In case of additional conditions, new contracts are concluded

4. The contract may be terminated by agreement of the parties

5. The contract may be terminated as a consequence

- In case of declaring any of the parties bankrupt or in case of force majeure (force majeure)
- In the event of dissolution or reorganization of either party.

## 6. Legal Addresses of the Parties

Mkhitar Gosh "Armenian-Russian International University LLC Address: c. Yerevan, Sebastia 3/7
Bank - Armeconom OJSC,
Vanadzor branch
ID 163138146846:
VAT number: 01243384

Director A.N. Patel
(signature)

"Cardiomed Family Medicine Center" LLC
Abovyan, Republic Avenue N 11 administrative building
Bank "ACBA-Credit Agricole Bank" CJSC
No. 220113331171000:
VAT number 03536349:

Director Samvel Hayrumyan
(signature)